ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Բիոլ. և գյուղատնտ. գիտություններ V, № 6, 1952 Биол. и сельхоз. науки

ԲԺՇԿԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Լ. Ս. Հովհաննիսյան

# ՄԻ ԷՋ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

*Հայ ժողովրդի բազմադարյան պատմության մեջ քիչ տեղ չեն բռնում բժշկության ասպարեզում հայ և եղբայրական ժողովուրդների համագործակցության հիանալի էջերը, որոնցից մեկին մենք կանդրադառնանք այստեղ։*

*1828 թ. Հայաստանի տերիտորիայի մի զգալի մասի Ռուսաստանին միացվելը և դրանով Հայկական մարզի ստեղծվելը պատմական շրջադարձային իրադարձություն էր ոչ միայն երկրի քաղաքական և տնտեսական կյանքում, այլև առողջապահության բնագավառում։*

*Ինչպես նկատել են Կ. Մարքսը և Ֆ. Էնգելսը «Ռուսաստանը Արևելքի նկատմամբ կատարում է իրոք պրոգրեսիվ դեր» [1]։*

*Ինչպես ողջ իրանական տիրապետության մեջ, այնպես էլ Հայաստանում, մինչև 1828 թ. չի եղել ոչ մի բժշկական կազմակերպություն կամ հիմնարկ, իսկ բժշկական «կադրերը» բաղկացած էին աննշան քանակով տեղացի ինքնուս-բժիշկներից, ոսկրահարդարներից և հեքիմներից։*

*Ավերված գյուղերը և քաղաքները գտնվում էին ծայրահեղ հակասանիտարական պայմաններում և, որևէ տիպի գիտական բժշկական օգնությունից զուրկ լինելու հետևանքով, հաճախակի ենթարկվում էին համաճարակային հիվանդությունների բռնկմանը։*

*Նորաստեղծ Հայկական մարզի բժշկական գործը վարում էր Թիֆլիսի Կովկասյան բժշկական վարչությունը, որը բնակչության բուժ-օգնության գործի մեջ ներգրավեց և տեղական ինքնուս բժիշկներին, որոնք ինչպես նշում է Շոպենը [2], լինելով տեղացի բժիշկ և լավ ծանոթ մարզում տարածված հիվանդություններին, իրենց հարուստ փորձը հաղորդում էին Հայաստան եկած ռուս բժիշկներին։*

*«Կան մի շարք համաճարակային հիվանդություններ, որոնք տեղացի բժիշկները բուժում են բավական հաջող։ Մեր բժիշկներից ոմանք, որոնք գտնվում են հոսպիտալներում կամ մարզում, հարակցելով իրենց տեսական գիտելիքներին և տեղի բարդ հիվանդությունների բուժման փորձը, Երևանի համար դարձան նույնպես համարյա թե անհրաժեշտ» [2]։*

*Նորաստեղծ Հայկական մարզում, ուր Պարսկաստանից և Թյուրքիայից անցած ժանտախտն ու խոլերան դեռ մոլեգնում էր, ինքնուս տեղացի բժիշկների առաջավոր տարրերը ամեն կերպ ձգտում էին համագործակցել ռուս բժիշկներին, գիտակցելով, որ դրանով նրանք ամենից առաջ ծառայում են ժողովրդի առողջապահության պաշտպանման գործին։*

Ինչպես ձեռնարկված հակահամաճարակային պայքարում, այնպես էլ բնակչությանը բուժ-օգնություն հասցնելու գործում, ռուս բժիշկների և հայ տեղացի ինքնուս բժիշկների հետ միասին զործոն մասնակցություն են ցույց տվել և տեղացի ինքնուս ադրբեջանցի բժիշկները, որոնց անունների և գործունեության մասին մեզ հաջողվել է ՀՍՍՌ Պետական արխիվում հայտնաբերել որոշ տվյալներ։ Դրանք են հայերից. Գևորգ Տեր-Կարապետյանը, Հովհաննես Դալլաքյանը, Մարգար Բաբայանը, Մանուկ Անտոնյանը, Արման Ստեփանյանը և ուրիշները։

Դրանց մեջ են նաև հետևյալ ադրբեջանցի բժիշկները. Միրզա Մահմադ Հասան Հաջի Ալլահվերդի օղլի, Միրզա Մահմադ, Միրզա Նաժաֆ Ամիր օղլի, Միրզա Մահմադ Բաղիր օղլի։

Վերոհիշյալ տեղացի ինքնուս բժիշկներից մեծ մասի գործունեության վերաբերյալ մեզ տեղեկություններ չեն հասել։ Այդ բժիշկներից մի քանիսի, ինչպես օրինակ Գևորգ Տեր-Կարապետյանի, Միրզա Մահմեդ Հասան Հաջի Ալլահվերդի օղլու, Միրզա Մահմադի բժշկական գործունեության մասին մեզ հասած տեղեկություններից կարելի է գաղափար կազմել նաև մյուսների գործունեության մասին։

Ինչպես ցույց են տալիս արխիվային տվյալները, ադրբեջանցի ինքնուս բժիշկ Միրզա Մահմադ Հասան Հաջի Ալլահվերդի օղլին ոչ միայն ծառայել է զինվորական հոսպիտալում, այլև բուժական օգնություն ցույց տվել Նախիջևանի բնակչությանը։ Մարզային վարչությունը նրան ներկայացրել է կառավարական պարգևատրության։ Այդ մասին մի փաստաթղթում ասված է հետևյալը.

«Նախիջևանի ոստիկանական վարչության հոկտեմբերի 4-ի № 384 զեկուցման մեջ ասվում է, որ վարչությունը դեռ հունիսի 18-ին № 202-ով տեղեկացրել է, որ այնտեղ ամառը գոյություն ունեցող հիվանդությունների ժամանակ, հիվանդների բուժումը հանձնարարված է եղել տեղական ադրբեջանցի բժիշկ Միրզա Մահմադ Հասանին, որպեսզի նա հատկապես աղքատ բնակչությանը բուժեր իր հաշվին, վստահ լինելով, որ նա ժամանակի ընթացքում պետությունից կստանա պատշաճ պարգևատրում։

Հրամայել են ի հարգանք ընդունելով Նախիջևանի ոստիկանական վարչության միջնորդությունը ադրբեջանական բժիշկի ցուցաբերած ջանասիրության մասին, վարչությունը սահմանում է որպես պարգևատրություն նրան տալ միանվագ 100 ռուբլի արծաթով»։

Նույնը պետք է ասել նաև Միրզա Մահմադի մասին, որը 1828–1849 թթ. ընթացքում, բացի բնակչությանը բուժ-օգնություն ցույց տալուց, ծառայել է Երևանի զինվորական հոսպիտալում.

Այսպիսով տեղացի ինքնուս հայ բժիշկները, տեղացի ինքնուս ադրբեջանցի բժիշկների հետ միասին Հայկական մարզ եկած առաջին ռուս բժիշկների ղեկավարությամբ իրականացրել են ժողովրդի առողջապահության և հատկապես հակահամաճարակային մի շարք միջոցառումները ժողովուրդների բարեկամության մթնոլորտում։

Հայկական ՍՍՌ
Գիտությունների ակադեմիայի
բժշկության սեկտոր

Ստացվել է 20 IV 1952

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *К. Маркс и Ф. Энгельс*--Сочинения, том XXI, стр. 211, 1932
2. *И. Шопен.*—Исторический памятник состояния Армянской области в эпоху ее присоединения к Российской империи, стр. 915, 1852
3. Из протокола Армянского областного правления от 4 октября 1829 г. Гос. центральный архив Арм. ССР, ф. 90, д. 5, л. 661.

Л. С. Оганесян

# Страничка из истории медицины

## Резюме

Выявленные нами архивные документы (Арм. Гос. архив) показывают, что еще в 1828 г., когда значительная часть Восточной Армении была присоединена к России, местные самоучки-врачи армяне и азербайджанцы всячески содействовали впервые командированным в Армянскую область русским врачам в деле оказания медицинской помощи местному населению.